# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԵՍԵՍԹԻ-Ն ՀՀ ՇՄԱ ԵԱՃԱՊՁԲ-2024/013 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 10 | մանկական մահճակալներ | մանկական մահճակալներ | մանկական մահճակալներ | ՀՀ ՌԴ | Պետք է պատրաստված լինի էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ հումքից, պետք է լինի լավ հղկված, ողորկ, առանց ծլեպների, էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ նյութերով, անկյունները պետք է լինեն կլորացված կամ անկյուններին ամրացվեն պոլիմերային կամ ռետինե՝ անվտանգությունն ապահովող հատուկ դետալներ։ Պետք է լինեն ամուր՝ պատրաստված մաշակայուն նյութերից, ինչը շահագործման |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ընթացքում ի հայտ չգալու պարագայում մատակարարը պարտավորվելու է սեղմ ժամկետներում փոխարինել մատակարարված ապրանքը և/կամ կատարել համապատասխան վերազինում կամ ամրացում: Պետք է ապահովվի էսթետիկությունը, մասնավորապես՝ գունավորումը և/կամ նկարազարդումը պետք է կատարվի որակյալ, հստակ գունավորմամբ, առանց արտադրական խոտանների: Պետք է ապահովվի էրգոնոմիկությունը, այսինքն՝ մատակարարվող գույքը պետք է լինի համապատասխան հասակային խմբի չափսային պահանջներով, ցանկալի է նաև լինի կարգավորման հնարավորությամբ և հարմարավետ՝ շահագործման ժամանակ: Երկհարկանի մահճակալի չափսերն են՝ 1400 x 600 x 1400 մմ ( Ե x L x Բ), այն պատրաստվում է 18 մմ լամինացված E0դասի ΦSU-ից: Առաջին հարկի մահճակալի բարձրությունը գետնից 300 մմ, երկու հարկերի միջև տարածություն՝ 800 մմ: Երկու |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | հարկերի մահճակալների գծային չափսերն էլ նույնն են և ունեն նույն խորությունը՝ 150-200 մմ: Ունի հետևյալ չափսերի՝ 400 x (35 x 35) x 185 x 1170 մմ ( L x Խ x Բ) փայտե աստիճան, (35 x 35) մմ չափսերի փայտյա աստիճանիարթակներով, որոնց միջև քայլերի հեռավորությունը՝ 250-300 մմ: Ամրագոտինները նույնպես պատրաստվում է 18մմ լամինացված E0դասի ՓՏՍ-ից, ունեն 300 մմ լայնություն և ալիքաձև տեսք: Ալիքի խորությունը 50-100 մմ է , երկարությունը՝ 200- 300 մմ: Ներքնակների տակ գցվում է ամբողջական 18մմ հաստությամբ լամինացված E0դասի ՓՏՍ, որոնց վրա օդափոխության համար պետք է բացվեն 30 մմ տրամագծով առնվազն երեք անցք: Ներքնակը հենվում է կողերով, լայնությամբ անցնող 18մմ հաստությամբ 200 մմ լայնության լամինացված E0դասի ՓՏՍ-ից պատրաստված հինգ ամրագոտիների և սնարներին ամրացված դետալների վրա: Ներքնակի նկարագիրը գտիր «Փափուկ գույք և պարագաներ» |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | բաժնի թիվ 6 կետում: Լամինացված E0դասի ՓՏՍ-ի աշխատանքային հարթության բոլոր անկյունները պետք է կլորացվեն, եզրերը շրջափակվեն 1-2 մմ հաստության պոլիմերային եզրաժապավենով (PVC կամ համարժեք), կամ անկյուններին ամրացվեն պլաստմասե կամ ռետինե կլորացված հատուկ դետալներ: Մահճակալի կոնստրուկցիոն բոլոր դետալները հավաքված են պտուտակներով, փայտե չիվիներով, էմուլսիայով: Բոլոր միացումներն իրականացնել թաքնված և երաշխավորված ամրակցումներով: Ոտքերին պետք է ամրացվեն պոլիմերային խցաններով՝ 8 մմ հաստությամբ: Գույները նախապես համաձայնեցնել մանկապարտեզի տնօրինության հետ: Նմուշները պետք է մինչ մատակարարում համաձայնեցվեն պատվիրատուի հետ: Պետք է սահմանվի երաշխիքային սպասարկում՝ առնվազն 1 տարի, արտադրական թերությունների և հնարավոր անհամապատասխանությունների վերականգնման, վերանորոգման |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | և/կամ փոխարինման նպատակով: Ապրանքի վրա պետք է կատարվի մակնշում: Մակնշումը պետք է կատարվի հայերեն, թույլատրվում է նաև միջազգային լեզվով (մասնավորապես՝ անգլերեն, ռուսերեն), ընթեռնելի տարբերակով: Մակնշումը պետք է կատարվի այնպիսի հատվածում, որպեսզի չխաթարի ընդհանուր էսթետիկ տեսքը: Մակնշումն անմիջապես արտադրանքի վրա կատարելու անհնարինության դեպքում թույլատրվում է վերոգրյալ տեղեկատվությունը ամփոփել ուղեկցական թերթիկում և/կամ գրքույկում (կամ համարժեք, օրինակ՝ տեխնիկական անձնագրում): |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ԷՍԷՍԹԻ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՇՄԱ ԷԱՃԱՊՁԲ-2024/013 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 10 | | | | | |